




231

65 IV-2









ան պիտի հանդիպի անստիկ Քորթ Արթուրին, որովհետեւ ան պաշտպանուած պիտի ըլլայ ճարտարական սեծ զօրաբանակով մը եւ անվտանգ ծովային յինակէտով մը: Եթէ Գուրորաթքին ուղղուի դէպի Քորթա, ան աստի կարուելով երկաթուղի գրծէն իր բանակին թեւերը պիտի ենթադէ ճարտարական յարձակումներուն:

Շատերը սակայն կը պնդեն թէ ինչ հերոսութիւն որ ցուցնեն ճարտարացիները, այնուամենայնիւ ճարտարական պիտի յաղթուի, որովհետեւ ուսուական միջոցները շատ խոշոր են, ինչպէս եւ զիմացկունութիւնը:

(Շարունակելի)

ԿԱՊՐԻՆՔ . . .

Օհ, քաղցր է կեանքը, անգոյ կարծեցեալ նպատակի մը հասնելու տենչով: Մինչ մեր իղձերն, հիւլէ—յոյսերն ալ կը կարմրին, կիյնան մեր ոտքերուն քով:

Օհ, քաղցր է կեանքը, ու անգիտակից, Ապրիլ կը ձգտինք, կեանքը կը քայլէ. . .

Վաղանցուկ ժպտին՝ վիշտն յարակից Բոպէ մը միայն սեզ կը մտայէ. . .

Ու կապրինք գարձեալ, կապրինք երազուն,

Յուսովով դէպք մը, հրաշք մը հուսէ. . . Մինչեւ որ մահուան քոյր, սեւեռուն Ապստոլ աչքերն յաւիտեան գոցէ. . .

ՀՐԱՆՏ

Բարիք

ԶԱՆՈՐ ՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՆՔԸ

—)o(—

Ռուսական ծայրագոյն արեւելքում ունեցած յարատեւ անյաջողութիւնները վերջ ի վերջոյ

Ա. ԱՄՅԵՏԵԱՏՐՈՎ

ՎԻԿՏՈՐԻԱ ՊԵՂՂՈՎ: Ա.

(Տօնախմբութիւն)

Քրագիտի յիշողութիւններից: Ամրան արկածներ քաւակաւ սարսիկակ հաւատարմութեան (հրաշք, ուսուցիչներ)

Բ.

(Շար. 660-րդ թիւն)

Սիրային փնտռութիւն այս աղբիկայի արտակարգ միջոցառում մարզի գլուխը պարտուում էր: Օգտուելով այն վայրկեանից, երբ Վիկտորիա Պալովան ինձ թողով, Պետր Պետրովիչի հետ ինչ որ վէճի մտաւ, ես ոտքի կանգնեցի, շատերն արդէն ոտքի վրա էին, եւ համացուկ յայտ միկի թփի ետեւովը անցայ ու ուղիների դէպի լճակ, որ պարտէցի խորքում ծառերի տրանքով փափրլում էր:

—Ալեքսանդր Վախտինովի՛ լսեցի մի տանական ձայն: Տեսնում եմ

պատճառ են գտնում որ ուսուցորարարները իրար քննադատեն ու դատապետեն:

Բաւական ժամանակ է որ զօրաւարների լարված յարաբերութեան մասին խօսվում է օտար և ինչ ուսու մամուլում:

Գնե՛րալ Գրիմպերկի պարտութիւնը այդ գծաութիւնները հասցրեց ծայրայեղութեան:

«Լէքօ տը Պարի» վերջին համարում հետեւեալ տեղեկութիւնը կայ Գրիմպերկի և Կուրոպատկինի յարաբերութիւնների մասին:

Գրիմպերկը բացի ծարին հեռագրելը և իր ընտանիքին է հեռագրել, որի մէջ յայտնում է թէ հաւանական է որ ինքը երկար մնայ Բեստերուրգում և պիտի կարողանայ Կուրոպատկինի դրութիւնը խախտել:

Այս ամենը լինելով հանդերձ, պալատում խոսում են որ առայժմ անկարելի է Կուրոպատկինին փոխել, որովհետեւ նա կազմակերպական մեծ ընդունակութիւններ է ցոյց տուել և ծարը նրանից գոհ է:

Գրիմպերկին յանձնարարված է եղել լուրջարկողական մի շարժում կատարել, բայց նա առանց զլխաւոր հրամանատարին հարցնելու, մեծ ճակատամարտի է բռնվել: Կուրոպատկին չէր կարող հաուլբարսին Գրիմպերկին օգնութեան զրկել և ոչ էլ թոյլ տալ որ յարձակուի ճարտարական բանակի ճակատի վրա, որովհետեւ նա պարտաւոր է եղել պաշտպանել Շախոյի գիծը:

Գրիմպերկի՝ առանց հրամանի ճակատամարտի մտնելը խստորէն քննադատվում, ու եզրա-

նստարանի վրա, ուղիղ ջրի մօտ, նստել է անտելի գեղեցկութեամբ մի երիտասարդ, այնքան գեղեցիկ որ նրանից մի քրիստոսի պատկեր կարելի է գծել կամ թէ այդ տեսակ մի բան: Ծաշի միջոցին այդ դէմքը եւ կերպարանքը, հեռուից տեսել էի, բայց կարճատեսութեան պատճառով չէի կարողացել լաւ դիտել:

—Մենք մի քիչ ծանօթ ենք շարունակեց երիտասարդը: Կանգնելով եւ ձեռքը մեկնելով, ի հարկէ դուք ինձ մոտացել էք: Ես ձեր խմբագրատուն եկել եմ, պատկերներ եմ բերել:

—Ահ, մտաբերում եմ հիմա, դուք պարոն Բուրուս էք:

—Հէնց ինքը նա: Ալէքսէյ Ալէքսիևիչի Բուրուսն, ազատ, ու շատ ազատ նկարիչ: Նկարներս դուք չը հուսանեցիք. . . Եւ ճիշտն ասած հուսանելիք բաներ էլ չէին. . . շատ վատ էին նկարված. . . Ես ինքս ամաչում եմ: Այն ժամանակ լես թողորովին աշխատել չէի կարողանում. . . մատիտը հազիւ էի բռնում. . . պէտք էր նրանց ոչնչացնել, ամօթից խաղաղութեան համար, բայց ես ծախեցի մի ընտրութիւն շանոյ հրատարակութեան. . . հրատարակութեան սնունդ տուց—

Այդ հրատարակութեան համար բաւ

կացնում են որ Գրիմպերկ իրաւունք չունէր լուր իր նախաձեռնութեամբ գործի սկսել:

Զինուորական շրջանակներում սկսում են քննադատել և ճիծօսելին. նրա անձնատուութիւնը մեծ դժգոհութիւն է առաջ բերել է մանաւանդ ժողովրդի մէջ: Կառավարութիւնը վախենալով որ ժողովուրդը ճիծօսելի Ռուսաստան հասնելուն պէս հակակրական մեծ ցոյցեր պէտք է անէ նրա դէմ, կարգադրել է որ ճիծօսել Օդեսա չը հանդիպի, այլ ցամաք իջնի Սրբի մի ծովափնեայ փոքրիկ քաղաքներէ մէկում:

Այնպէս որ կասկած կայ թէ փառաբանված հերոսը հալածանքների պիտի ենթարկվի: Զարտոգութիւնը շատ բաներ անել կտայ ուս ժողովրդին ու ուսնեակայաւթիմին վիճակվում է մաքառել շատ ու շատ մեծ խոչնդոտների դէմ:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԶՐՈՅՑ

—)o(—

Արեւելեան Ասիայի խորքերում, ճարգկութեան բուրովին տհաս օրերում ապրում էր մի ժողովուրդ, որը իր թագաւորին ընտրում էր ազանիով: այսինքն ժողովրդային ամբողջ քէն վստահվում էր ազանուն, ու թագաւորը մեռած վայրկեանում ազանին թոցնում էին և նա որ տան տանիքի վրայ կանգնէր այդ տան տարէց տղամարդին թագաւոր էին ընտրում:

Ազանու կատարած ընտրութիւնից յետոյ, ժողովուրդը այլ

է որ ստորագրութիւնը յարգի լինի. ապրանքը չին նայում: Փողի պէտք ունէի. փողի:

Ես նայեցի Բուրուսին. . . ինչ պեճնասէր, զգեստը շքեղ ու գեւ նոր դուրս եկած ասեղի տակից, թեւնոցների կոճակները ոսկի, փողկապը Լօնտօնից. այնպէս որ կարիք ունեցողի չէ նմանում: Նա հասկացաւ իմ նայածքի նշանակութիւնը եւ խոտորկեց:

—Հէնց սրանց համալ էլ պէտք էին այն փողերը, փնթփնթաջ: Այս տեղ էի շտապում:

Հը, Լոնցինք:

—Դուք ինչու էք բարեհաճել գալ այստեղ. յանկարծ աչքերիս մէջ նայելով իր խոշոր սեւ եւ ջերմային փայլով լի աչքերով: —Նոյնպէս մրցելու համար:

Այժմ ես ըմբռնեցի նկարչին եւ ծիծաղեցի:

—Ոչ, սյդպիսի մտադրութիւն չունեմ:

Նկարիչը հառաչեց, օւղելով շողեր գազաւեշտական ձեւ տալ իր հստաչին:

—Իսկ ես մրցակից եմ, ասեց նա, եւ չափից աւելի վախենում եմ թէ մրցակիցներից աւելի մրցակից:

Եւս չէր հետաքրքրվում թագաւորով, բաւական էր որ գահի տէրը կար, ու երկիրը կառավարվում էր. բայց եկ տես որ ազանու ընտրած թագաւորները մեծ մասամբ լաւ էին լինում, ու ժողովուրդը այդ վերագրում էր նրան որ ազանին աստուածային թոցուն լինելով մարդիկ ճանաչելու շնորքով ուժով, կարողանում էր լաւ թագաւոր ընտրել և ժողովրդի քէն ի շարք գործ չդնել:

Մի օր էլ թագաւորը մեռաւ. ժողովրդի ձեռքը վազեցին ազանու բոյնը նրան թոցնելու որ թագաւոր ընտրէ իրենց համար: Ու յանկարծ տեսան որ ազանին սատկել է: Մերերից մին գոյնը նետելով ընկերներին ասաց. այս լաւ նշան չէ, տղանին սատկել է. սենք չենք կարողանալու լաւ թագաւոր ընտրել. մի քիչ սպասենք. կարելի է որ Աստուած մեզ մի ուրիշ ազանի ուղարկէ միւս ձեռքը համաձայնեցին ու եկան ժողովրդին յայտարարեցին:

«Թագաւոր ընտրող ազանին սատկել է. տելի լաւ է չը շտապենք և զլուխներս փորձանքի մէջ չը գցենք»: Ազանու մահուան մէջ Աստուած ազգարար մատը կայ. աւելի լաւ է մի քիչ ժամանակ առանց լաւ թագաւորի մնալ, քան վատ թագաւոր բերել եւ գլուխներիս նստեցնելու:

—Ոչ, ոչ, ազգակեց ժողովուրդը, մանաւանդ անգիտակից ամբողջ, առանց թագաւորի ինչպէս կարելի է. մենք ազանու չափ էլ չկանք. մենք մեզ համար թագաւոր կընտրենք. առանց թագաւորի երկիր, ժողո-

Սոսովանում եմ որ երբ Բուրուսին տեսայ հեռացած ամենքից այդ սիրուն առանձնացած նստարանի վերա, որը կարծես շինված էր սիրային տեսակցութիւնների համար, առաջին մտածումս եղաւ՝ արդեօք այս գեղեցիկ երիտասարդը չէ: Բայց հիմա լսելով նկարչի զրգոված ձայնը եւ զիտելով աչքերում փայլող խոտվայտը բոցիւր ու սիրուն, անկարող իր եւ գոռոզ բերանի անկիւններում առաջացած ցաւագին կնճիտները՝ մտածեցի:

—Չէ, սիրելի բարեկամս, դու էլ բանի աէր չես եղել, ինչպէս եւ միւսները, դեռ գոռոզ աւելին:

Մենք սկսեցինք խօսել այս եւ այն նիւթերի մասին, Պետրբուրգի ծանօթների, գեղարեստի մասին, նըկարչութեան մէջ Բուրուսը երեւաց այն անվճարողայն կիսադեկաւանաներից մին, որոնք վերջին ժամանակներս այնքան բազմացել են: Մօտան եւ գեղեցկութեան հոտառութեան հրապուրանքները սրանց քաշում են դէպի նկարչական նոր հոսանքները:—Մալիալինները, Բէնարսները. իսկ դպրոցը եւ կիսատաղանդների վարանոտութիւնը դէպի գատղնաբար ինքզինքներն ըննադատող նմանողներին, որոնք միշտ մտ-



պարուններն որ իրենց զրկած յօղածները չը տպագրվեցին, որ անհրաժեշտ էր այսինչ կամ այնինչ յօղածի տպագրութիւնը որ պէտք է քաջալերել որպէս զի շարունակ գրեն և այլն:

Այնպէս որ ահէն երկու տող բան գրող այն համոզում ունի թէ անպատճառ իր գրածը պէտք տպագրվի: Կան մարդիկ էլ որ պատանջում են չը տպագրված յօղածը իրենց վերադարձնել:

Միանգամ ընդ միշտ յայտարարում ենք մեզ գրութիւն գրկողներին, որ այսուհետեւ խմբագրութեան գլուխը չը ցուցնեն այդ տեսակ անեղի պահանջներով: Յօղածը եթէ չէ տպագրվում, կը նշանակէ որ տպագրվելու չէր: Եթէ չէ վերագործնելու, նշանակում է որ չը վերագործնելու օրէնքը պահպանվում է անխախտօրէն, ու չը տպագրված յօղածը ընկնում է զամբիւղի մէջ, այնուհետեւ երկար ճանապարհորդութեան ըսկրում ու այլևս անկարելի է նրան վերադարձնել:

Իհարկէ խմբագրութիւնը գոհ կը լինէր որ բոլոր գրութիւններն էլ լաւ գրված, հետաքրքիր, շինիչ և տպագրվելու արժանի լինէին և տպագրվէին: որովհետեւ գրանով թերթի վրայ թափած մտաւոր աշխատութիւնը ուժեղ կերպով կը կրճատվէր: բայց որ այդպէս չեն մեծ մասամբ, ուրեմն ի՞նչ պէտք է անել:

Այսօր օրինակի համար մի պարոն մի ներկայացման շիրագործ վիճում մասին երկարու բարակ մի կատակերգութիւն է գրել ու բերել «Նարժում»ի մէջ տպագրելու համար: Զարմանալի հակացողութիւն խմբագրութիւնների մասին:

Ամեն մարդ ուզում է իր զուռնան փչել թերթերի միջոցով, թէկուզ այդ զուռնան շատ անախորձ ձայն ունենար, լսողի սիրտը խառնէր:

Կատակերգութիւնը բերողը մի սպանալիք էլ տակն է գրել: «Կատակերգ զրկված է իրաւունքի» «Այսինքն զուռնա ամեն սեղ փչելու վճռողականութիւնը ունիմ», ուզում է ասել պարոնը:

Սակայն յայտարարութիւն... Կատակերգութիւնը գրող պարոնը իր յաւակնտութեամբ բացառիկ կատակերգական տիպ է և ընդունակութիւնը չէ ունեցել իր գործի անյաջողութեան լուրջ պատճառները իր կատակերգական հոգեբանութեան մէջ գտնելու մի լաւ կատակերգութիւն իր մասին գրելով առանձին բրօշուրով հրատարակել, առանց խմբագրութիւնների անանդի ձանձրոյթ պատճառելու:

Մենք խորհուրդ ենք տալիս

պարոնին քիչ վեր վեր թռչել և վառնան ժամատուն չը կործնել...

Այդ պատիկ գործերի համար պարոնի չափ մեծ մարդկանց պէտքը չէ զգացվում վառնայի մէջ և ներկայացման չը յաջողվելու գլխաւոր պատճառը հէնց գրանունն էր կայանում:

Ի՞նչ քիչ շտուկութեան պէտք չկայ գոյութիւն շունեցող հակառակորդների դէմ իրական պայքար էր Ի՞նչ քիչ շտուր բայց նա մեծ Ի՞նչ քիչ շտու էր: պատիկ գործիչները անտանելիօրէն արգահատելի են:

ԲԱՏԻԱՐ Է ԲԱՎԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե. Ֆրանգիւսեանի Ա Տ Ր Պ Ա Տ Ա Կ Ա Ն Պատկերազարդ ծովաձուի

«Արարատական»ը պարունակում է իր մէջ մի շարք յօղածներ (թւով 30-35) որոնք զանազան ժամանակներում լոյս են տեսել պարբերական հրատարակութիւնների մէջ, մեծագոյն մասը ՄՈՒՐԸ ամսագրում, կը լինեն նաեւ նոր վրէժներ, իսկ արտատպումները լոյս տեսնելու են նոր սրբագրութեամբ աւելի ընդարձակաւ և ճոխացրած, Իրբք՝ որ տպագրւելու է Թիֆլիզում, ունենալու է 450-500 էջ, 50-60 արկեր և տեսարաններ:

Բաժանորդագրին է Ռուսաստանում 1 ր. 50 կոպէկ: Պարսկաստանում 1 թուան, իսկ Արտասահմանում 5 ֆրանք: Բաժանագրին կանխիկ է. լոյս տեսնելուց յետոյ գրքի գինը կարող է զգալի կեժպով բարձրանալ:

Բաժանորդագրութիւնը ընդունում է

Ռուսաստանում.— Թիֆլիսում «Հէր մլա» տպարանում: Բազում Պ Տիգրան Ռազմաճեանի մօտ: Նրեւանում Սարգիս Օհանջանեանի մօտ: Բոսնով գօնի վրայ Պ. Զաքար Ռուստամեանի մօտ Բաթումում Սողոմոն Յարութիւնեանի մօտ:

Պարսկաստանում.— Թէհրանում Պր. Յաբէթ Ռազմարեանի մօտ: Թաւրիզում Պ. Ալէք. Բարեանի և Յովսէփ Յովհաննէսեանի մօտ: Սալմաստ Հեղինակ մօտ:

Արշակունի.— Եղիպտոս.— Իովտօր Յ. Փաշեան.— Ալէքսանտրիա.— Ամերիկա.— «Հայրենիք» խմբագրատուն (Պոսթմեն) Պոլիկարիա.— «Շարժում» խմբագրատունը.— Վառնա

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍԻԱ

Յարը ու քաղ մը ստորագրեր է հակառակ քանի մը նախարարներու ընդգրկմագրութեան, որով Ձեմստվոններու ներկայացուցիչները ժողովի պիտի հրաւիրւին:

— Յարը կոմս Պալէնի հրամայել է քննութիւններ կատարել յունվարի մէջ պատահած անցքերու մասին:

— Լուր կը պտըտի որ Սիպե-

րիոյ երկաթուղիին գործաւորները կը պատրաստուին գործադուլի:

— Պաթումի գործադուլը կը շարունակուի, գարոցները գոյ են, պաշարի պակասութիւն կը գացուի:

— Թիֆլիսի գործադուլը վրտանգաւոր կերեւի, կառավարական շինութիւնները զօրքով կը փահուին:

— Յունվար 31ին Բեթերսպուրկէն կը հեռագրեն հետեւեալը:

Կը պնդեն որ ճարտարներու և ուսնեքու միջեւ հաշտութեան բանակցութիւններ կան:

Ալաւաքին գործոց նախարար կոմս Լամստօրֆ ցարին նախագիծ տեղեկագիր մը տուեր է ժամանակաւոր և վերջնական հաշտութեան մասին, և պայմաններու մասին որոնք այնքան նուստացուցիչ չեն Ռուսիոյ համար և ոչ ծանր:

Իրբ թէ ճարտարները կը խոստանան որ Մանչուրիան չինացիներուն յանձնեն, եւ Թորթ Արթուրը միայն իրենց պահեն, սակայն պայմանով որ Ռուսիա մինչեւ 20 տարի չպիտի պատերազմի:

— Բեթերսպուրկէն յունվար 29ին կը հեռագրեն հետեւեալը: Կացութիւնը կը շարունակէ ծանր մնալ: Պոլիկարի գործարանին մէջ 15000 գործաւորներ կրկին գործադուլ ըրած են: Կարող չէ խանգարուած:

— Սոսնովիցայի մէջ կրկին գործադուլ սկսուեր է. 27 բանւորներ հրացանի բռնուած են, կան և ծանր բազմաթիւ ծանր վիրաւորեալներ:

— Ռուս երկաթի հանքերու միութիւնը Ուրթէին յիշատակագիր մը աւուած է որուն մէջ նաեւ կը յայտնուի թէ սահմանագրութիւնը անհրաժեշտ է:

— Մոսկուայի բժիշկները Իրենց ժողովին մէջ որոշում մը տուեր են, որով կուսակից կը հանչիւանան գործաւորներուն և կը պահանջեն որ պատերազմը դադարի:

— Քուլթայի մէջ ուսանողները չորցեր ըրեր են, Իպրոցները գոցուած են:

— Պաթումի մէջ բարձրագոյն դպրոցականներու խումբ մը ցարին պատկերը պատուեր է: Զօրքերը ցուցարարներուն դէմ հրացան պարպեր են:

— Իշխան Միրսիի, հրաժարելով իր պաշտօնէն քաշուած է Խարքովի մօտ գտնուած իրեն կալուածքը:

— Մաքսիմ Կորբիյ ազատ արձակուած է:

— Յարի ու քաղովը յանձնախումբ մը կազմուած է գործաւորներուն գժգոհութեանց պատ-

ճառները քննել և անոնց գոհացում տալ: Այդ յանձնաժողովը պիտի կազմուի գործաւորներու և բանւորներու ներկայացուցիչներէն:

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

«Ռուսակոյէ Սլոյժ» թերթին Մոսկուայէ կը հեռագրեն որ Սանդեպուի քով ուս սպանուածներուն թիւը 10,000է աւելի է:

— Լիպուայէն կը հեռագրեն յունվար 30ին որ այդ օրը սուսական 3րդ նաւատորմի զբ պիտի մեկնի:

— Պալթիկեան նաւատորմի զբ Մատակակաւ կը գտնուի: հրամանատարը զեռ ոչ մէկ հրաման տացած չէ:

— Յունվար 31ին Լոնտօնէն կը հեռագրեն թէ պատերազմէն վերջը ճարտնեան նպատակ ունի Բէքինի մէջ առաջին խորհրդատու պետութեան գիրք բանել:

— Լոնտօնէն կը հեռագրեն որ Իուրօքսթիւն կը պատրաստուի Ռուսիա մեկնելու: Ռուսիան լրջօրէն կը մտածէ հաշտութեան մասին: սասնեւ հինգ օրուան բնթացքին մէջ Յարր տրամադիր է ժողովրդէն 1000 ներկայացուցիչներ հրաւիրել հաշտութեան մասին խորհրդակցելու համար:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տօքթօս Թորոսեան կրնգուրի աւել տեսակ հիւանդներ, կէսընէ վերջը ժամը 2էն մինչեւ 4 Բնակարան է Փողոց Տոււաւսքա թիւ 3

ՅԱԿՈՒ Կ. Զ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ (Սարափ) ՎԱՌՆԱ

Զանազան բնկերութեանց արժեթղթեր կը գնէ:

7-12

ԲԱՎԱՆՈՐԴԱԳՐՈՒՆ

—)o(—

Տարին վերջացաւ և մեր բաժանորդներէն շատերը զեռ իրենց բաժնեգրները չեն վճարած:

Կան և այնպիսիները որոնք երկու տարեկան պարսք ունին: Ինչպէս կելուի այդ մարդիկը կը կարծեն թէ մենք թուղթը աւելբար ձրի կառնենք, գրաշարները ու տպարաններն ալ ձրի կաշխատին և մենք հաց չենք ուտեր, այլ օդով կապրինք:

Քիչ մը ազնիւ ըլլալու են մեր չը վճարող բաժանորդները, մանաւանդ անոր համար որ մենք երբէք առանց բաժանորդներու պահանջին թերթ չենք զրկեր մարդու: Պահանջողը և իր պարտականութիւնը կատարելու տարրական զգացումէն զուրկ չը պիտի ըլլայ:

Отговорникъ Мурадъ-Франосянъ

Печатница «Взаимность» Варна